«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Կրիմինալիստիկա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	ԻՐԳ-4-10-013
ՖԱԿՈՒԼՏԵՏ	ոստիկանական միջին մասնագիտական կրթության
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ոստիկանական գործ
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Բ. Ալեքսանյան, Լ.Սարդարյան E-mail: benik1962@mail.ru, հեռ.091-35-83-13 E-mail: lusine.sardarian@gmail.com, հեռ.093-85-53-05
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս 1-ին կիսամյակ 2-րդ կուրս 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	ոստիկանության սպա

ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Կրիմինալիստիկա» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 180 ժամ, որից 46 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար, 52 ժամ գործնական, 52 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է դիֆ. ստուգարքով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Կրիմինալիստիկա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են Կրիմինալիստիկայի դերն ու նշանակությունը, նույնացման տեսական հիմունքները, կրիմինալիստիկական լուսանկարահանման առանձնահատկությունները, անձի արտաքին հատկանիշների տարրերը, հետքերի, զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի ու սառը զենքերի կրիմինալիստիկական նշանակությունը, փաստաթղթերի նախնական հետազոտման հիմունքները, կրիմինալիստիկական հաշվառումների դերն ու նշանակությունը, քննչական գործողությունների մարտավարական առանձնահատկությունները:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին համապարփակ գիտելիքներ հաղորդել՝ կրիմինալիստիկայի նշանակության և խնդիրների, նույնացման ենթակա օբյեկտների, պատկերիչ լուսանկարահանման հնարավորությունների, անձի արտաքին հատկանիշների տարրերի, քննության ընթացքում հետքերի, զենքերի և փաստաթղթերի նշանակության, քննչական գործողությունների կատարման մարտավարական հնարքների վերաբերյալ՝ նրանց մոտ ձևավորելով անհրաժեշտ գործնական հմտություններ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել կրիմինալիստիկայի համակարգն ու մեթոդները, 2) ներկայացնել նույնացման էությունը, 3) ուսումնասիրել պատկերիչ լուսանկարահանման մեթոդները, 4) ներկայացնել արտաքին հատկանիշների նկարագրման միասնական տերմինաբանությունը, 5) ներկայացնել հետքաբանական օբյեկտների տեսակները, 6) ներկայացնել դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը, սառը զենքերի տեսակները, 7) ներկայացնել փաստաթղթերի հետազոտման տեսակները, 8) ներկայացնել կրիմինալիստիկական հաշվառման հնարավորությունները, 9) ներկայացնել քննչական գործողությունների նախապատրաստության և մարտավարության առանձնահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **Կարողանա՝**		1) սահմանել և թվարկել կրիմինալիստիկայի հասկացությունը, համակարգը և մեթոդները, 2) տարբերել կրիմինալիստիկական նույնացման օբյեկտները, 3) ներկայացնել և իրականացնել պատկերիչ լուսանկարահանման մասնավոր հնարքները, 4) կազմել կոմպոզիցիոն (հավաքական) պատկերներ և արտաքին հատկանիշներով «Բանավոր պատկեր», 5) իրականացնել մատնադրոշման գործընթացը և ներկայացնել հետքաբանական օբյեկտների հայտնաբերման, ֆիքսման, վերցնելու ու զննության ընդհանուր կանոնները, 6) ներկայացնել ձգաբանական օբյեկտների և սառը զենքերի հայտնաբերման, ֆիքսման, վերցնելու ու զննության ընդհանուր կանոնները, 7) թվարկել հաշվառման տեսակները, 8) ներկայացնել քննչական գործողությունների նախապատրաստության ու անցկացման մարտավարական առանձնահատկություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) –ԵՊՀ հրատ., 2004 – 416 էջ **4.** Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք /Լևոն Օհանյան. – 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց. – ԵՊՀ հրատ., 2010 - 512 էջ **5.** Օհանյան Լևոն. Կրիմինալիստիկա: - ԵՊՀ – Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2004 – 504 էջ 6. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003. – 228 էջ

		7. Դեպքի վայրի զննության մարտավարություն. Ուղեցույց /Մ. Սեմերջյան, Բ. Ալեքսանյան, Ս. Մարգարյան/ 2017 թ., 8. Պլանների, սխեմաների կազմումը դեպքի վայրի զննության ընթացքում. գիտագործնական ձեռնարկ /Բ.Ալեքսանյան, Հ.Կուծանյան, Լ.Սարդարյան/ 2019թ. 9. Անձի նույնականացումը արտաքին հատկանիշներով: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Բ.Զ. Ալեքսանյան/ Եր.: Հեղինակային հրատարակություն, 2017 10. Криминалистика: учебник для бакалавров /Ю. В. Францифоров, А.Б. Смушкин, А.А. Рождествина. – 2-е изд., стер. – М.: Издательство «Омега – Л», 2015 – 260 с. 11. Криминалистика: учебник (под общей ред. А.Г. Филиппова.) – изд., перераб. и доп. – М.: Высшее образование. 2009. – 835 с. 12. Криминалистика: учебник (под ред. А.Г. Филиппова.) – М.: Высшее образование, Юрайт – Издат, 2009, - 441с 13. Криминалистика: учебник (Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская) – 3-е нзд., перереб. и доп. – М.: Норма, 2008. – 944с.: 14. Криминалистика: Учебник для вузов (Под ред. заслуженного деятеля науки РФ, проф. Р.С. Белкина.) – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005. – 992с
Լրացուցիչ		1.Անձի նույնականացումը արտաքին հատկանիշներով: ՈՒս. Ձեռնարկ «Տ.Տ. Մանուկյան», Եր.: 2015 – 57 էջ Ալեքսանյան Մ., Նախնական քննություն. Եր. 2002 – 770 էջ: 2.Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/.- Եր.: Միվա-Պրեսս, 2009 3.Ա.Բ. Ավագյան, Ա.Գ. Հովսեփյան, Տ.Ռ. Պետրոսյան. «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., <<այբ-Քե>>. 1993թ. 4.Шашонова Т.Н. Следы человека на месте преступления, их роль в доказывании (биологический аспект). – М.: МосУ МВД России. Издательство «Щит –М», 2009. – 153с 5.Портретная экспертиза: Учебно-практическое пособие (под ред. д.ю.н., проф. А.М. Зинина. – М.: Издательство «Экзамен». издательство «Право и закон», 2004, - 160с 6.Справочная книга криминалиста (Руководитель авторского коллектива и ответственный редактор – доктор юридических наук, професор, Заслуженный деятель науки РФ Н.А.Селиванов.-М.): Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА - М), 2001 – 727с 7.Зинин А.М. Субьективный портрет. Курс лекций. – М.: Издательство «Щит - М», 2012. – 136стр. 8.Процессуальные акты предварительного расследования. Примерные образцы. Москва. «Юридическая литература». 1991 9.Осмотр места происшествия. Справочник следователя. Москва.: «Юридическая литература» 1982
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1 (գործնական) Բաղադրիչ 2 (գործնական) Բաղադրիչ 3 (գործնական) Բաղադրիչ 4 (գործնական) Բաղադրիչ 5 (հարց ու պատասխան)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
9-10	Գերազանց
7-8	Լավ
4-6	Բավարար

		0-3	Անբավարար
		0	Չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ/ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի ողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխան ներքոհիշյալ բաղադրիչների: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում, տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100%-ով կատարելու դեպքում:	
Այլ տեղեկություններ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:	
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:	
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:	
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:	

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության
ֆակուլտետի 2-րդ կուրսի դիֆ. ստուգարքի

1. Կրիմինալիստիկայի առարկան և խնդիրները
2. Կրիմինալիստիկայի համակարգը
3. Կրիմինալիստիկայի մեթոդները
4. Կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը և նպատակները
5. Կրիմինալիստիկական նույնացման օբյեկտները և դրանց դասակարգումը
6. Կրիմինալիստիկական նույնացման և խմբային պատկանելիության պարզման մեթոդիկան
7. Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը
8. Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներ, հնարքները և արդյունքների դատավարական ամրագրումը
9. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթները
10. «Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան
11. Հետքերի հասկացությունը և դասակարգումը
12. Հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և վերցնելու ընդհանուր կանոնները:
13. Մարդու կողմից թողնվող հետքերի հասկացությունը և դասակարգումը
14. Արձանագրության մեջ հետքաբանական օբյեկտների նկարագրմանը ներկայացվող պահանջները
15. Արյան հետքերը, որպես հետազոտման օբյեկտ:
16. Թքի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ:
17. Մազերը, որպես հետազոտման օբյեկտ:
18. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը:
19. Միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները:
20. Հանցագործությունների որոշ տեսակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները:
21. Միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը:
22. Քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:
23. Դատական ձգաբանության հասկացությունը և ձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը
24. Զենքերի, կրակված գնդակների ու պարկուճների զննությունը: Կրակոցի հետքերը
25. Սառը զենքի հասկացությունը և դասակարգումը
26. Օբյեկտը որպես սառը զենք բնութագրող չափորոշիչները
27. Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը
28. Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները
29. Կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, իրավական հիմքերը և համակարգը

30. Կրիմինալիստիկական հաշվառման տեսակները, խնդիրները և վարման կարգը
31. Զննության հասկացությունը և տեսակները
32. Դեպքի վայրի, իրերի և առարկաների զննման մարտավարությունը
33. Խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները
34. Խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները
35. Հարցաքննության ընդհանուր դրույթները:
36. Հարցաքննության նախապատրաստությունը:
37. Վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը:
38. Կասկածյալի հարցաքննության մարտավարությունը:
39. Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:
40. Դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները
41. Դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը
42. Ներկայացվող ճանաչողական լուսանկարների զննման հիման վրա կազմել դրանցում պակերված անձի «Բանավոր պատկերը»
43. Զննել կոշիկի ծավալային հետքից պատրաստված գիպսե ծեփապատճենը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
44. Զննել մատնադրոշմային թաղանթի վրա ֆիքսված մատնահետքը և կասկածյալից վերցված տասմատնյա մատնադրոշմային քարտը, կազմել մատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
45. Զննել ներկայացվող պահանջագիրը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

ՕՐ/ՇԱԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
	Կրիմինալիստիկայի դերը հանցագործությունների բացահայտման գործում դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել կրիմինալիստիկայի դերը և նշանակությունը հանցագործությունների բացահայտման, քննության և կանխման գործում: **Քննարկվող հարցերը՝** 1.Կրիմինալիստիկայի առարկան և խնդիրները: 2.կրիմինալիստիկայի համակարգը և մեթոդները:	Ներկայացվում է կրիմինալիստիկայի հասկացությունը, առարկան, խնդիրները, համակարգը և մեթոդները:	Ներկայացնում է կրիմինալիստիկայի հասկացությունը, համակարգը և մեթոդները, թվարկում է խնդիրները:
	Կրիմինալիստիկական նույնացման տեսությունը դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել կրիմինալիստիկական նույնացման տեսական հիմունքները, նույնացման օբյեկտները, հատկանիշները և դրանց նշանակությունը: **Քննարկվող հարցերը՝** 1.Կրիմինալիստիկական նույնացման հասկա-ցությունը և նույնացման օբյեկտները 2.Կրիմինալիստիկական նույնացման և խմբային պատկանելիության պարզման մեթոդիկան:	Ներկայացվում է կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը, նույնացման օբյեկտները, ինչպես նաև կրիմինալիստիկական նույնացման և խմբային պատկանելիության պարզման մեթոդիկան:	Ներկայացնում է կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը, օբյեկտները, նույնացման և խմբային պատկանելիության պարզման մեթոդիկան:

	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել պատկերիչ լուսանկարականումը որպես կրիմինալիստիկական լուսանկարչության տեսակ: **Քննարկվող հարցերը՝** Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը:	Ներկայացվում է կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը, համակարգը:	Ներկայացնում է կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, համակարգը:
	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել պատկերիչ լուսանկարականումը որպես կրիմինալիստիկական լուսանկարչության տեսակ: **Քննարկվող հարցերը՝** Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:	Ներկայացվում է պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:	Ներկայացնում է պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:

	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը լուսանկարչության մեթոդների ու հնարքների առանձնահատկությունների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** 1.Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը: 2.Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:	Ներկայացնում է կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, համակարգը և պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:	Կարողանում է սահմանել կրիմինալիստիկական լուսանկարահանման հասկացությունը, թվարկել համակարգը և պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները:
	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել կոնկրետ իրադրությունում իրականացնել կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային, դետալային լուսանկարահանման մասնավոր հնարքները:	Ներկայացվում են լուսանկարահանման մասնավոր հնարքները և մեթոդները:	Կարողանում է կիրառել լուսանկարահանման մասնավոր հնարքներ և մեթոդները:
	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել իրականացնել ճանաչողական լուսանկարահանում:	Ներկայացվում է ճանաչողական լուսանկարահանման իրականացումը:	Կարողանում է իրականացնել ճանաչողական լուսանկարահանում:
	Պատկերիչ լուսանկարահանման մեթոդներն ու հնարքները գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել կազմել լուսանկարչական հավելված	Ներկայացվում է լուսանկարչական հավելվածի կազմումը:	Կարողանում է կազմել լուսանկարչական հավելված:

	«Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել «Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան: **Քննարկվող հարցերը՝** «Բանավոր պատկերի» կազմման միասնական տերմինաբանության պարզաբանում:	Ներկայացվում է արտաքին հատկանիշների տարրերի և «Բանավոր պատկերի» կազմման միասնական տերմինաբանությունը:	Կարողանում է թվարկել արտաքին հատկանիշների տարրերը, ներկայացնել «Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան:
	Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը «Բանավոր պատկերի» կազմման միասնական տերմինաբանության վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** «Բանավոր պատկերի» կազմման միասնական տերմինաբանություն	Ներկայացնում է «Բանավոր պատկերի» կազմման միասնական տերմինաբանությունը:	Թվարկում է արտաքին հատկանիշների տարրերը, ներկայացնում է «Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան:

	«Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** Սովորեցնել արտաքին հատկանիշներով նկարագիր կազմել:	**Լսարանային պայմաններում կազմվում է** արտաքին հատկանիշներով նկարագիր	Կարողանում է կազմել արտաքին հատկանիշներով նկարագիր:
	«Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** Սովորեցնել տրամադրված լուսանկարների միջոցով արտաքին հատկանիշների նկարագիր կազմել:	Կազմվում է տրամադրված լուսանկարներում պատկերված անձի արտաքին հատկանիշների նկարագիրը:	Կարողանում է միասնական տերմինաբանության միջոցով կազմել արտաքին հատկանիշներով նկարագիր:
	«Բանավոր պատկերի» կազմման մեթոդիկան գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** Սովորեցնել կազմել կոմպոզիցիոն պատկերներ կազմել:	Ներկայացվում է համակարգչային ծրագրերի օգտագործման միջոցով կոմպոզիցիոն պատկերների կազմումը:	Կարողանում է համակարգչային ծրագրերի օգտագործման միջոցով կազմել կոմպոզիցիոն պատկերներ:
	Բաղադրիչ 1	**գործնական**		
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ Դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** Դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել նյութական արտացոլվածք հանդիսացող հետքերի դերն ու նշանակությունը հանցագործությունների դեմ պայքարի գործում: **Քննարկվող հարցերը՝** Հետքերի հասկացությունը և դասակարգումը	Ներկայացվում է հետքերի հասկացությունը և դասակարգումը:	Ներկայացնում է հետքերի հասկացությունը և դասակարգումը:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ Դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** Դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել մարդու կողմից թողնվող հետքերը: **Քննարկվող հարցերը՝** Մարդու կողմից թողնվող հետքերի հասկացությունը և դասակարգումը	Ներկայացվում են մարդու կողմից թողնվող հետքերը:	Ներկայացնում է մարդու կողմից թողնվող հետքերը:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ Դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** Դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել նյութական արտացոլվածք հանդիսացող հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և վերցնելու ընդհանուր կանոնները **Քննարկվող հարցերը՝** 1.Հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և վերցնելու ընդհանուր կանոնները: 2.Արձանագրության մեջ հետքաբանական օբյեկտների նկարագրմանը ներկայացվող պահանջները:	Ներկայացվում է հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և վերցնելու ընդհանուր կանոնները, արձանագրության մեջ հետքաբանական օբյեկտների նկարագրմանը ներկայացվող պահանջները:	Ներկայացնում է հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման, վերցնելու ընդհանուր կանոնները ու արձանագրության մեջ դրանց նկարագրմանը ներկայացվող պահանջները:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հետքերի հետ տարվող աշխատանքներին ներկայացվող պահանջների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը**	Ներկայացնում է հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման, վերցնելու ընդհանուր կանոնները ու արձանագրության մեջ դրանց նկարագրմանը ներկայացվող պահանջները:	Կարողանում է ներկայացնել հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման, վերցնելու ընդհանուր կանոնները ու արձանագրության մեջ դրանց նկարագրմանը ներկայացվող պահանջները:

		1.Հետքերի հասկացությունը և դասակարգումը 2.Հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և վերցնելու ընդհանուր կանոնները:		
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել իրեղեն ապացույցների վրայից հետքեր հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտություններ:	Ներկայացվում է տարբեր մակերեսներից հետքեր հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտությունները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է տարբեր մակերեսներից հետքեր հայտնաբերել, ամրագրել և վերցնել՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել մատնադրոշմման հմտություններ:	Ներկայացվում է մատնադրոշման աշխատանքը՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է իրականացնել մատնադրոշմում:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել արտածել մատնադրոշմային հիմնական և լրացուցիչ բանաձևեր:	Ներկայացվում է հիմնական և լրացուցիչ բանաձևերի արտածումը:	Կարողանում է արտածել մատնադրոշմային հիմնական և լրացուցիչ բանաձևեր
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել ոտնահետքեր հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտություններ:	Ներկայացվում է տարբեր մակերեսներից ոտնահետքեր հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտությունները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է տարբեր մակերեսներից ոտնահետքեր հայտնաբերել, ամրագրել և վերցնել՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Հետքաբանական օբյեկտները որպես ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել ատամների հետքերի հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտություններ:	Ներկայացվում է սննդի վրայից ատամների հետքերի հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտությունները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է սննդի վրայից ատամների հետքեր հայտնաբերել, ամրագրել և վերցնել՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Կենսաբանական ծագման հետքերը կրիմինալիստիկայում դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել կենսաբանական ծագման հետքերի դերն ու նշանակությունը հանցագործությունների բացահայտման գործում: **Քննարկվող հարցերը՝** 1. Արյան հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 2. Սերմնահեղուկի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ:	Ներկայացվում են **կենսաբանական ծագման հետքերը:**	Կարողանում է դասակարգել **կենսաբանական ծագման հետքերը:**

		3. Թքի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 4. Մազերը, որպես հետազոտման օբյեկտ:		
	Կենսաբանական ծագման հետքերը կրիմինալիստիկայում սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հանցագործությունների բացահայտման գործում կենսաբանական ծագման հետքերի դերի ու նշանակության վերաբերյալ: **Քննարկվող հարցերը** Արյան հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 2. Սերմնահեղուկի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 3. Թքի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 4. Մազերը, որպես հետազոտման օբյեկտ:	Ներկայացնում է կենսաբանական ծագման հետքերի դերն ու նշանակությունը հանցագործությունների բացահայտման գործում:	Կարողանում է ներկայացնել կենսաբանական ծագման հետքերի դերն ու նշանակությունը հանցագործությունների բացահայտման գործում:
	Կենսաբանական ծագման հետքերը կրիմինալիստիկայում գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել կենսաբանական հետքերի հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտություններ:	Ներկայացվում է կենսաբանական հետքերի հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտությունները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է կենսաբանական հետքեր հայտնաբերել, ամրագրել և վերցնել՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ: Քննարկվող հարցերը՝ 1. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը: 2. Միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները: 3. Հանցագործությունների որոշ տեսակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները: 4. Միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը:	Ներկայացվում են միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ:	Կարողանում է ներկայացնել միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ:
	Միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը միկրոմասնիկների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը** 1. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը: 2. Միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման,	Ներկայացնում է միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը, միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները, հան-	Կարողանում է ներկայացնել միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը, միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները, հանցագործությունների որոշ տե-

		փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները: 3. Հանցագործությունների որոշ տեսակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները: 4. Միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը:	ցագործությունների որոշ տեսակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները, միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը:	սակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները, միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը
	Միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել միկրոմասնիկներ հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտություններ:	Ներկայացվում է միկրոմասնիկներ հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու հմտությունները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է միկրոմասնիկներ հայտնաբերել, ամրագրել և վերցնել՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Բաղադրիչ 2	**գործնական**		
	Զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի նախնական ուսումնասիրումը դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի նշանակությունը հանցագործությունների դեմ պայքարի գործում: **Քննարկվող հարցերը՝** Դատական ձգաբանության հասկացությունը և ձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը: 2.Զենքերի, փամփուշտների, կրակված պարկուճների և գնդակների զննումը, կրակոցի հետքերը:	Ներկայացվում է դատական ձգաբանության հասկացությունը և ձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը, զենքերի, փամփուշտների, կրակված պարկուճների և գնդակների զննումը, կրակոցի հետքերը:	Ներկայացնում է դատական ձգաբանության հասկացությունը, դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը և զենքերի, փամփուշտների, կրակված պարկուճների ու գնդակների զննման ընդհանուր կանոնները:
	Զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի նախնական ուսումնասիրումը դասախոսություն/2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել սառը զենքի հասկացությունը և տեսակները **Քննարկվող հարցերը՝** 1.Սառը զենքի հասկացությունը և դասակարգումը: 2.Օբյեկտը որպես սառը զենք բնութագրող չափորոշիչները:	Ներկայացվում է սառը զենքի հասկացությունը և դասակարգումը, օբյեկտը որպես սառը զենք բնութագրող չափորոշիչները:	Ներկայացնում է սառը զենքի հասկացությունը, դասակարգումը, սառը զենքը բնութագրող չափորոշիչները:
	Զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի նախնական ուսումնասիրումը սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** 1. Ստուգել սովորողների իմացությունը ձգաբանական օբյեկտների նախնական ուսումնասիրմանը վերաբերվող խնդիրների շուրջ: 2. Ստուգել սովորողների իմացությունը սառը զենքերի նախնական ուսումնասիրմանը վերաբերվող խնդիրների շուրջ: **Քննարկվող հարցերը**	Ներկայացնում է դատական ձգաբանության հասկացությունը, դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը և զենքերի, փամփուշտների, կրակված պարկուճների ու գնդակների զննման ընդհանուր կանոնները, ներկայացնում է սառը զենքի հասկացությունը,	Կարողանում է ներկայացնել դատական ձգաբանության հասկացությունը, դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը և զենքերի, փամփուշտների, կրակված պարկուճների ու գնդակների զննման ընդհանուր կանոնները, սառը զենքի հասկացությունը, դա-

		1.Դատական ձգաբանության հասկացությունը և ձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը: 2.Զենքերի, կրակված պարկուճների և գնդակների զննումը, կրակոցի հետքերը: 3.Սառը զենքի հասկացությունը և դասակարգումը: 4.Օբյեկտը որպես սառը զենք բնութագրող չափորոշիչները:	դասկարգումը, սառը զենքը բնութագրող չափորոշիչները:	սակարգումը, սառը զենքը բնութագրող չափորոշիչները
	Զենքերի և դրանց կիրառումից առաջացած հետքերի նախնական ուսումնասիրումը գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորեցնել զննել ձգաբանական օբյեկտներ:	Ներկայացվում է ձգաբանական օբյեկտների զննման ընդհանուր կանոնները՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է զննել ձգաբանական օբյեկտներ՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:
	Փաստաթղթերը որպես ապացույցի աղբյուր դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման հիմնական խնդիրները: **Քննարկվող հարցերը՝** 1.Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը: 2.Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:	Ներկայացվում է փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:	Ներկայացնում է փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:
	Փաստաթղթերը որպես ապացույցի աղբյուր սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան • խմբային քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը փաստաթղթերի նախնական ուսումնասիրմանը վերաբերվող խնդիրների շուրջ: **Քննարկվող հարցերը՝** 1.Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը: 2.Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:	Ներկայացնում է փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:	Կարողանում է ներկայացնել փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման տեսակները, նշանակությունը և խնդիրները:
	Փաստաթղթերը որպես ապացույցի աղբյուր գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորեցնել փաստաթղթերի զննման ընդհանուր կանոնները:	Ներկայացվում է փաստաթղթերի զննման ընդհանուր կանոնները:	Կարողանում է զննել փաստաթղթեր և կազմել արձանագրություն:

	Կրիմինալիստիկական հաշվառումները դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել հաշվառումների նշանակությունը հանցագործությունների բացահայտման գործում: **Քննարկվող հարցերը՝** 1.Կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, իրավական հիմքերը և համակարգը: 2.Հաշվառման տեսակները, խնդիրները և վարման կարգը:	Ներկայացվում է կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, իրավական հիմքերը, համակարգը, հաշվառման տեսակները, խնդիրները և վարման կարգը:	Ներկայացնում է կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, հաշվառման տեսակները և խնդիրները:
	Կրիմինալիստիկական հաշվառումները սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հաշվառման տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** 1.Կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, իրավական հիմքերը և համակարգը: 2.Հաշվառման տեսակները, խնդիրները և վարման կարգը:	Ներկայացնում է կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, հաշվառման տեսակները և խնդիրները:	Կարողանում է ներկայացնել կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, հաշվառման տեսակները և խնդիրները:
	Բաղադրիչ 3	**գործնական**		
	Քննչական վարկածներ դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել հանցագործությունների քննության պլանավորման հասկացությունը և նշանակությունը: **Քննարկվող հարցերը՝** Քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:	Ներկայացվում է քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:	Ներկայացնում է քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:
	Քննչական վարկածներ սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար 1. հարց ու պատասխան **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը քննչական վարկածների հասկացության, տեսակների, առաջադրման և ստուգման վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** Քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:	Ներկայացնում է քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:	Կարողանում է ներկայացնել քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը:
	Քննչական վարկածներ գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորեցնել գրավոր պլան կազմելու տեխնիկան:	Ներկայացվում են պլանավորմանը ներկայացվող պահանջները: Կազմվում է գրավոր պլան:	Կարողանում է ելակետային տվյալների կամ լուսանկարչական աղյուսակի հիման վրա քննության պլան կազմել:

	Դեպքի վայրի զննություն դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել զննման նախապատրաստական և մարտավարական առանձնահատկությունները ըստ տեսակների: **Քննարկվող հարցերը՝** Զննության հասկացությունը և տեսակները	Ներկայացվում է զննության հասկացությունը և տեսակները, դեպքի վայրի, իրերի և առարկաների զննման մարտավարությունը:	Ներկայացնում է զննության հասկացությունը, տեսակները և դեպքի վայրի, իրերի ու առարկաների զննման մարտավարական հնարքները:
	Դեպքի վայրի զննություն դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել դեպքի վայրի զննության կարգը և դեպքի վայրի պահպանության կազմակերպումը: **Քննարկվող հարցերը՝** 1. Դեպքի վայրի զննության հասկացությունը, խնդիրները և տեսակները 2. Դեպքի վայրի զննության իրականացման հիմնական սկզբունքները 3. Դեպքի վայրի զննության մասնակիցները **4.** Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը կատարված հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո (մինչև դեպքի վայր մեկնելը) և դեպքի վայրում՝ մինչև զննումը սկսելը **5.** Դեպքի վայրի պահպանությունը	Ներկայացվում է դեպքի վայրի զննության կարգը և դեպքի վայրի պահպանության կազմակերպումը:	Ներկայացնում է դեպքի վայրի զննության կարգը և դեպքի վայրի պահպանության կազմակերպումը:
	Դեպքի վայրի զննություն դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը **Քննարկվող հարցերը՝** 1. Ապացույցների ամրագրման գրաֆիկական ձևի կրիմինալիստիկական հասկացությունը 2. Պլանների և սխեմաների հասկացությունը և տեսակները 3. Պլաններին և սխեմաներին ներկայացվող պահանջները 4. Պլաններ և սխեմաներ պատրաստելը	Ներկայացվում է դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը	Ներկայացնում է դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը
	Դեպքի վայրի զննություն սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը զննման նախապատրաստության և անցկացման կրիմինալիստիկական հանձնարարականների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** 1.Զննության հասկացությունը և տեսակները 2.Դեպքի վայրի, իրերի և առարկաների զննման մարտավարությունը:	Ներկայացնում է զննության հասկացությունը, տեսակները և դեպքի վայրի, իրերի ու առարկաների զննման մարտավարական հնարքները:	Կարողանում է ներկայացնել զննության հասկացությունը, տեսակները և դեպքի վայրի, իրերի ու առարկաների զննման մարտավարական հնարքները:

	Դեպքի վայրի զննություն սեմինար /2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմման վերաբերյալ: **Քննարկվող հարցերը՝** 1. Ապացույցների ամրագրման գրաֆիկական ձևի կրիմինալիստիկական հասկացությունը 2. Պլանների և սխեմաների հասկացությունը և տեսակները 3. Պլաններին և սխեմաներին ներկայացվող պահանջները 4. Պլաններ և սխեմաներ պատրաստելը	Ներկայացնում է դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը	Կարողանում է ներկայացնել դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը
	Դեպքի վայրի զննություն գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ դեպքի վայրի սահմանների որոշման և տարածքի սահմանազատման կարողության ձևավորում:	Անհատական և խմբային աշխատանք՝ համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ:	Կարողանում է որոշել դեպքի վայրի սահմանները և սահմանազատել տարածքը:
	Դեպքի վայրի զննություն գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ դեպքի վայրի ընդգրկված սահմաններում հետքեր հայտնաբերելու, ամրագրելու, վերցնելու և փաթեթավորելու հմտություններ ձևավորում:	Անհատական և խմբային աշխատանք՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է դեպքի վայրում հետքեր հայտնաբերել, ամրագրել, վերցնել և փաթեթավորել:
	Դեպքի վայրի զննություն գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ իրերի և առարկաների զննման հմտությունների ձևավորում:	Անհատական և խմբային աշխատանք՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է զննել տարբեր տեսակի իրեր և առարկաներ և կազմել զննման արձանագրություն:
	Դեպքի վայրի զննություն գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ դիակի առկայության դեպքում դեպքի վայրի զննության հմտությունների ձևավորում:	Անհատական և խմբային աշխատանք՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի օգտագործմամբ:	Կարողանում է դիակի առկայության դեպքում կատարել դեպքի վայրի զննություն:
	Դեպքի վայրի զննություն գործնական /2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ դեպքի վայրի զննության արդյունքերի դատավարական ամրագրման հմտությունների ձևավորում:	Անհատական և խմբային աշխատանք՝ դեպքի վայրի զննության արձանագրության կազմում:	Կարողանում է կազմել դեպքի վայրի զննության արձանագրություն:
	Բաղադրիչ 4	**գործնական**		

	Խուզարկության մարտավարական առանձնահատկությունները դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել խուզարկության կարևորությունը որպես քննչական գործողություն: **Քննարկվող հարցերը՝** Խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:	Ներկայացվում է խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:	Ներկայացնում է խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:
	Խուզարկության մարտավարական առանձնահատկությունները դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել խուզարկության կարևորությունը որպես քննչական գործողություն: **Քննարկվող հարցերը՝** Խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները:	Ներկայացվում է խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները:	Ներկայացնում է խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները:
	Խուզարկության մարտավարական առանձնահատկությունները սեմինար/2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • Հարց ու պատասխան **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը խուզարկության տեսակների, խնդիրների և նախապատրաստության վերաբերյալ: **Քննարկվող հարցերը** Խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:	Ներկայացնում է խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:	Կարողանում է ներկայացնել խուզարկության հասկացությունը, խնդիրները և տեսակները:
	Խուզարկության մարտավարական առանձնահատկությունները սեմինար/2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • Հարց ու պատասխան **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը խուզարկության մարտավարական առանձնահատկությունների վերաբերյալ ըստ տեսակների: **Քննարկվող հարցերը** Խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները:	Ներկայացնում է խուզարկության անցկացման մարտավարական առանձնահատկությունները:	Կարողանում է ներկայացնել խուզարկության մարտավարական առանձնահատկությունների ըստ տեսակների:
	Խուզարկության մարտավարական առանձնահատկությունները գործնական/2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ խուզարկության կատարման հմտությունների ձևավորում:	Խմբային աշխատանք՝ համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ:	Կարողանում է կատարել խուզարկություն:
	Հարցաքննության մարտավարությունը դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել հարցաքննության կարևորությունը որպես քննչական գործողություն: **Քննարկվող հարցերը՝** 1. Հարցաքննության ընդհանուր դրույթները: 2. Հարցաքննության նախապատրաստությունը: 3. Վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը:	Ներկայացվում է հարցաքննության հասկացությունը, խնդիրները, նախապատրաստությունը, վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը:	Ներկայացնում է հարցաքննության հասկացությունը, խնդիրները, նախապատրաստությունը, վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը:

	Հարցաքննության մարտավարությունը դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել հարցաքննության տեսակների մարտավարական առանձնահատկությունները: **Քննարկվող հարցերը՝** 1. Կասկածյալի հարցաքննության մարտավարությունը: 2. Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:	Ներկայացվում է կասկածյալի հարցաքննության մարտավարությունը:Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:	Ներկայացնում է կասկածյալի հարցաքննության մարտավարությունը: Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:
	Հարցաքննության մարտավարությունը սեմինար/2 ժամ/	**Տեսակը՝** սեմինար • Հարց ու պատասխան **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հարցաքննության նախապատրաստության և անցկացման կրիմինալիստիկական հանձնարարականների վերաբերյալ: **Քննարկվող հարցերը** 1. Հարցաքննության ընդհանուր դրույթները: 2. Հարցաքննության նախապատրաստությունը: 3.Վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը: 4. Կասկածյալների հարցաքննության մարտավարությունը: 5. Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:	Ներկայացվում է հարցաքննության հասկացությունը, խնդիրները, նախապատրաստությունը, վկաների, տուժողների, կասկածյալների հարցաքննության մարտավարությունը, անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:	Կարողանում է վերլուծել հարցաքննության կազմակերպչական խնդիրները, տարանջատել նախապատրաստության փուլերը, վկաների, տուժողների, կասկածյալների, անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:
	Հարցաքննության մարտավարությունը գործնական/2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողների մոտ ձևավորել ներկայացված ելակետային տվյալների հիման վրա հարցաքննությունը ըստ հաջորդականության կազմակերպելու հմտություններ:	Ներկայացված ելակետային տվյալների հիման վրա ըստ հաջորդականության կազմակերպվում է հարցաքննություն:	Ներկայացված ելակետային տվյալների հիման վրա ըստ հաջորդականության իրականացնում է հարցաքննություն և արձանագրում այն:
	Հարցաքննության մարտավարությունը գործնական/2 ժամ/	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել ներկայացված հարցաքննության արձանագրության ուսումնասիրման արդյունքում վեր հանել մարտավարական սխալները:	Ներկայցվում է արդեն իսկ կազմված հարցաքննության արձանագրություն և բացատրվում են հնարավոր սխալները:	Տրամադրված արձանագրության ուսումնասիրման արդյունքներով պարզում է մարտավարական սխալները:
	Փորձաքննությունների նշանակումը դասախոսություն /2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** ներկայացնել փորձաքննությունների հնարավորություններն ու նշանակությունը որպես դատավարական ապացույցների ձեռք բերման աղբյուր: **Քննարկվող հարցերը՝** 1.Դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները: 2.Դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:	Ներկայացվում է դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները, դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:	Ներկայացնում է դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները, դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:

	Փորձաքննությունների նշանակումը սեմինար/2 ժամ	**Տեսակը՝** սեմինար • հարց ու պատասխան **Նպատակը՝** 1.Դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները: 2.Դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:	Ներկայացնում է դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները, դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:	Կարողանում է ներկայացնել դատական փորձաքննությունների հասկացությունը և տեսակները, դատական փորձաքննությունների նախապատրաստումն ու նշանակումը:
	Փորձաքննությունների նշանակումը գործնական /2 ժամ	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին սովորեցնել ներկայացված օբյեկտների ուսումնասիրման արդյունքում փորձաքննության նշանակման որոշման կազմում:	Փաստացի առկա օբյեկտների ուսումնասիրման հիման վրա փորձաքննության նշանակման որոշման կազմում:	Ներկայացված օբյեկտների ուսումնասիրման արդյունքում կարողանում է որոշել փորձաքննության տեսակը և հարցեր առաջադրել փորձագետին:
	Փորձաքննությունների նշանակումը գործնական /2 ժամ	**Տեսակը՝** գործնական **Նպատակը՝** սովորողներին ներկայացնել փորձագետի եզրակացության գնահատման չափորոշիչները:	Վերլուծվում է տարբեր փորձաքննությունների արդյունքում կազմված եզրակացությունները ըստ կառուցվածքի և բովանդակության:	Եզրակացությունների ուսումնասիրման արդյունքում պարզում է լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հիմքերի առկայությունը:
	Բաղադրիչ 5	**Հարց ու պատասխան**		